Տեառնընդառաջի տոնը հանդիսավորությամբ նշվեց Վիրահայոց թեմում

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնացույցով, Տեառնընդառաջի տոնը բովանդակում է Մարիամ Աստվածածնի կողմից 40-օրական Հիսուսին Տաճարին ընծայելու խորհուրդը, անշարժ է և ամեն տարի նշվում է փետրվարի 14-ին:

Տեառնընդառաջի տոնը Վիրահայոց թեմում նշվեց մեծ շուքով: Տոնին պատրաստվել էին թեմի հայաբնակ գրեթե բոլոր տարածաշրջաններում և մայրաքաղաքում:

Տոնակատարութունը թեմի եկեղեցիներում սկսվեց 2018 թվականի փետրվարի 13-ի նախատոնակով:

Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդի հանդիսապետությամբ և հոգևոր դասի մասնակցությամբ, տեղի ունեցավ նախատոնակ: Երեկոյան ժամերգությունից հետո կատարվեց Անդաստանի արարողություն, օրհնվեցին աշխարհի չորս կողմերը և մոմերը, իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Հայ ժողովրդի սիրած Տեառնընդառաջի տոնը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինաթյամբ հայտարարվել է նորապսակների օրհնության օր: Եկեղեցում էին գտնվում այն ամուսնական զույգերը, որոնք պսակադրվել էին անցած մեկ տարվա ընթացքում:

Հավարտ եկեղեցական արարողության, Սուրբ Գևորգ եկեղեցում հավաքված բազմությունը տեղափոխվեց եկեղեցու բակ: Ժողովրդին ողջույնի խոսքով դիմեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, տոնի առիթով փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը և շնորհավորանքը: Թեմակալ առաջնորդը հորդորեց ներկաներին՝ հավատարիմ մնալ ավանդական և հոգևոր տոներին, համախմբված Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջը՝ պահել ու պահպանել ազգայինը, հոգևորը:

1 / 5

Տեառնընդառաջի տոնը հանդիսավորությամբ նշվեց Վիրահայոց թեմում

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

2 / 5

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Վիրահայոց թեմի մամլո դիվան